ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՄՄՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/68 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	նստելատեղն՝ առնվազն 500x500մմ (Lxխ) չափսի, բարձրությունը հատակից՝ (460-480) մմ: Աթոռն օգտագործողի առավելագույն քաշը՝ մինչև 130 կգ: Դահլիճի աթոռի կմաղքը պետք է լինի մետաղական և փոշեներկված սև գույնի բարձրակարգ ներկանյութով: Թիկնակը և նստելատեղը պետք է պատրաստված լինեն 10-14 մմ հաստության նրբատախտակից, վրան կպած լինի 50-70 մմ հաստության, 25 կգ/մ3 խտությամբ սպունգ և երեսպատված լինի կահույքի համար նախատեսված որակյալ, հաստ, մուգ գույնի պաստառի ամուր կտորով, պաստառի կտորի գույնը պետք է համաձայնեցնել դպրոցի տնօրինության հետ: Նստելատեղը (նստատեղը) պետք է լինի ծալվող, ինչպես ցույց է տրված նմուշի նկարում և կարգավորվի կահույքագործության մեջ օգտագործվող անձայն, սահուն ծալվող, հատուկ նախատեսված մեխանիզմով: Բացված վիճակում նստելատեղի (նստատեղ) և թիկնակի հարթությունների կազմած անկյունը պետք է լինի 1050- 1100: Թիկնակի հետնամասի և նստելատեղի (նստատեղ) տակի պաստառին ամբողջ մակերեսով կարող է ամրացված լինել սև կամ մեկ այլ մուգ գույնի պլաստիկե համապատասխան դետալ, որն պարտադիր չէ: Ձեռքի հենակները կարող են երեսպատված լինեն հղկված, մշակված, եզրերը կլորացված, եռակի լաքապատված փայտե դետալով, իսկ եթե փայտյա չեն, այլ մետաղական, ապա պետք է լինեն փոշեներկված սև գույնի բարձրակարգ ներկանյութով և նրանց վրա կպած լինի առնվազն 10-14 մմ հաստության և 15 կգ/մ3 խտության սպունգ ու պաստառապատված հաստ, որակյալ և ամուր կտորով: Աթոռի ոտքերը պետք է լինեն երկաթյա և փոշեներկված բարձրակարգ սև գույնի ներկանյութով, հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից ամբողջ մակերեսով պետք է ամրացված լինի պլաստիկե մուգ գույնի դետալներ, որոնց

	պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ: Բոլոր միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Աթոռների հավաքածուի մեջ պետք է լինեն հատակին, անհրաժեշտության դեպքում նաև իրար հեշտությամբ ու ամուր ամրացնելու համար անհրաժեշտ բոլոր դետալները: Ձեռքի հենակների կողքում ծալված վիճակում կարող է լինել հավելյալ պլաստմասե դետալ, որն աթոռին նստած մարդու առջևում բացվող պլաստմասե հավելյալ սեղանիկ է և այն պարտադիր չէ: Դահլիճի աթոռները հատակին ամրացնելու անհրաժեշտությունը, կարգը և ձևը, պետք է համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: Նմուշը /նկար/ կցվում է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Մատակարարումը ըստ ուսումնական հաստատությունների /պատվիրատուի կողմից տրամադրված բաշխման ցանկին և մատակարարման ժամկետներին համապատասխան/ պետք է իրականացնի Մատակարարն իր միջոցների հաշվին: Չափաբաժնի համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Մատակարարման օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ММС ГРУП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/68 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	